

ՄԱՍԻՍԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ ԲԱԽՈՒՄՆԵՐ ՀԱՅԵՐՈՒ ԵՒ ԱԶԵՐԻՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ



Անցեալ Ուրբաթ, 17 Յունիսին, երբ Ատրպէյճանի խորհրդարանը նիստ մը դումարեց եւ մերժեց Լեւոնային Ղարաբաղի Հարզին Հայաստանին կցուելու հայկական պահանջը, Հայաստանի հարաւը դանդաղ Մասիս շրջանի Մայաթ նոյա գիւղին մէջ բախումներ տեղի ունեցած են տեղւոյն հայերուն եւ ազերիներուն միջեւ: Այդ բախումներուն ընթացքին վիրարուած են մօտ 15 հոգի: Մա-

սիսի շրջանը կը գտնուի թրքական սահմանէն մօտ 12 քիլոմետր հեռաւորութեան մը վերայ: Օտար լրատու գործակալութիւններ եւ յատկապէս ֆրանսական մամլոյ գործակալութիւնը միջ-համայնքային բախումներուն լուրը իմացած են Երկուշաբթի օր Երեւանի դատախազութենէն: Այս մասին Մոսկուայէն հեռաձայնով հարցապնդուելով, դատախազու-

թեան պատասխանատուներէն մին Մոսկուայի ֆրանսական մամլոյ գործակալութեան Երզրթակիցին հաստատած է եղելութիւնը եւ աւելցուցած թէ բախումներուն ընթացքին վիրարուած են ութն հայեր կրակոցի հարուածներէն իսկ եօթ կամ ութ ազերի թաթարներ՝ քարի եւ փայտի հարուածներէ: Երեւանի դատախազութեան պատասխանատուն չէ ճշդած թէ ինչ աստիճանի են հայերու ստացած վէրքերը, այլ միայն հաստատած է թէ ազերիներու ստացած վէրքերը «թեթեւ են»: Որպէս յաւելեալ մանրամասնութիւն պատասխանատուն աւելցուցած է թէ գիւղի տուներէն շատերուն ապակիները փշրուած են եւ տակաւին կա-

ցութիւնը «շատ ձգտեալ վիճակի մէջ է» շրջանին մէջ: Բախումներէն ետք, միշտ համաձայն Երեւանի դատախազութեան հայ պատասխանատուին, Հայաստանի ներքին փոխ նախարար Մելիք Սեթեան Երեւանի պատկերասփիւռէն ելոյթ ունեցած է Կիրակի յը եւ խօսած այս բախումներուն մասին, նոյն ատեն հանդարտութեան կոչ ուղղելով բնակչութեան: Ոչ-պաշտօնական աղբիւրներու կողմէ հաղորդուած տեղեկութիւններու համաձայն, անցեալ Շաբաթ օրուրնէ ի վեր Մասիսի շրջանը փակուած է երթեւեկի առջեւ, մանաւանդ դուրսէն շրջանը այցելել ուղղուածներուն առջեւ:

ՂԱՐԱԲԱՂԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՐԷԿ ՆՈՐ ՆԻՍՏ ՄԸ ԳՈՒՄԱՐԵՑ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

Ղարաբաղի Ինքնավար Մարզի զլխաւոր քաղաք Մատիսանակերտի Գերագոյն Մովետը (խորհրդարան) երէկ նոր նիստ մը դումարեց եւ քննեց Մարզը Հայաստանին կցելու հարցը: Աօսք աւանդ բոլոր երեսփոխանները պահանջեցին Ղարաբաղի Մարզին